

կրին վրայ մեծապէս կ'աճի հայկական Սէզն, որոյ ցօղունները նիզակաձև մաշկօք կամ թեփերով կը տարածուին գետնին վրայ, և ու մանք սակաւ մի վեր բարձրանալով՝ տերեւներ և մանր ծաղիկներ կ'արձակեն: Յունիս ամսոյն՝ տերեւներուն անկեանց մէջ կը ծնանին կարմրոյ որդերը լողնաչափ մեծութեամբ. առջի բերան գետնին եւ ընտր կը մնան սէզներուն հետ մէկտեղ, և երբ արեգական ջերմութիւնը կ'աճի, վեր կ'ելլան կը կանգնին. և երբեմն այնքան առատ և հոծ կը գտնուին այս ճճիք, մինչև կարծես գետնին երեսը կարմրագոյն գորգ մը տարածուեր է: Այրարատեան կարմրոյ արու որդն սեւագոյն է, թափանցիկ թեւերով՝ վարդագոյն եզերներով, խոշոր աչքերով կամ բալմաշիայ, երկայն ոտքերով և երկայն պոչով, ասուի կամ մետաքսի նման ոլորկ և փայլուն. իսկ էգն՝ ձուաձև է և կարմրագոյն, կրկին մեծութեամբ արուին, վից մանր և թոյլ թաթերով, ուստի գրեթէ և օտքի վրայ իսկ չի կրնար կենալ:

Այրարատեան գաւառներէն զատ՝ մեր աշխարհին ուրիշ կողմեր ևս կը յիշուի այս կարմրոյ որդն. յարեմուտս՝ կարնոյ գաւառին մէջ, և արեւելեան կողմը՝ ի Մարանդ. այս յետինս կը յիշէ Շարտէն եւ թնկտաներորդ դարու մէջ:

ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ «ՄԸ» ԿԱՄ «ՄԻ» ԱՆՈՐՈՇ ՄԱՍՆԸԿԻՆ



Բազմաւէպ Հանդիսիս նախընթաց ամսաթերթերէն միոյն մէջ, առանց ստորագրութեան յօդուածիկ մի, (որոյ հեղինակն այլուստ քաջածանօթ է ինձ՝ իւր ոչ սակաւ հմուտութեամբ հայրենի լեզուիս), կ'անդրադարձնէր (էջ 15) լծէ որչափ պատշաճագոյն է մեր մասնակցան տեղ՝ մի ձևը՝ ի գործ վարել գրութեանց մէջ, որ ոչ միայն ընտրելագոյն է՝ իւր նոյնութեամբ գրութեան մի յետադաս մասնակցան, այլ նաև աւելի ներդաշնակ է քան զիսով ձայնն մը հնչման, մինչդեռ վերջինս ռամկական համարուած է. որ և, ըստ առաջարկութեան վերոյիշեալ յօդուածագրին, իսպառ շնչուելու է գրութեանց միջէն:

Բայտ մեր կարծեաց մը ձևն այդքան խիստ դատաւճռոյ մ'ենթարկելէն յառաջ պէտք էր նորա հայերէն լեզուի մէջ գործած խանգարմանց յանցանքն յառաջ բերել, և այնուհետև իբրև խորթ կամ անհարապատ ծնունդ և օտարամուտ տաղտկալի հիւր՝ արտաքսել զինքն իրաւապէս հայերէն լեզուի ասպարիզէն: Բայց ուղիղն ըսելով՝ բաւական ժամանակէ ի վեր՝ ազգային օրագիր և պարբերական հրատարակութեանց մէջ ընդհանրապէս խոժոռ աչք միշտ կը նայուի այս մը ձևին վրայ, որոյ փոխանակ կը յաճախէ մի, սակայն առանց

խական յայտնի պատճառ մ'ունենալու. հետեւաբար մը ձեն իւր իրաւանց մէջ կը գտնուի՝ եթէ արդարացի բոլոր մ'ուղղէ այս տո, ղերուս մէջ առ գրասէրս, և իւր ազգայնութեան և հնութեան պատուոյն վրէժխնդիր կանգնի:

Գուցէ առարկուի թէ բաւական պատճառ է մը ձեին անախորժ խուլ ձայնն, որով մի ռամկացեր և եղեր է մը, զինքը երեսէ ձգելու և նախնական մի գրաբարի ձեին դառնալու համար:

Առ այս՝ պէտք է նախ դիտենք՝ որ ձայնի մէջ ներդաշնակութիւն ըսուածն, թէպէտ և հաստատուն կանոնաց վրայ հիմնուած, այլ ունի նաև իւր բացառութիւններն իւրաքանչիւր ազգի մէջ, որով այսինչ ձայնաւորն քան զմիւսն աւելի ընդարձակ գործածութիւն ստացեր է զանազան ազգաց լեզուի մէջ: Այսպէս մինչդեռ հայկական լեզուի (գրաբարի մէջ մանաւանդ) նախամեծար ձայնաւորն է ա, լատին լեզուն զգալի առաւելութեամբ քան զայլ ձայնաւորս կը գործածէ ոչ, յոյնն՝ է (սուղ և երկար), իտալականն՝ նոյնպէս է, ոչինչ նուազ նաև օ, գաղղիականն ը, անգղիականն՝ ի, և այլն:

Առտի հետեւանք կ'ելլէ, որ մինչդեռ բազմաց ներդաշնակ կ'երեւի մի ձայնն, ընդհակառակն ոչ սակաւուց ալ մը հնչումն, և թէ լոկ ներդաշնակութեան պատճառն կարող չէ անգործածութեան դատապարտել մը ձեր: Ուր թողունք որ շատ անգամ կը պատահի գրութեանց մէջ, որ եթէ մի ձեն միայն 'ի գործ վարենք' տաղտկալի նմանաձայնութեան ծնունդ պիտի ստիպուինք ալ, օրինակ իմն՝ եթէ ըսնէք քանի մի պատմաի, բոլորչի սեղանի մի վրայ, կը նմանի կանթեղի մի բոցին՝ խաւարի մէջ, և այլն. որոց մէջ ամենայն ազգի ա. կանչք հարկ է վկայեն թէ ախորժելի ներդաշնակութիւն պիտի ունենայ մը քան մի հնչումն:

Բայց պիտոր առարկուի թէ մը ռամկական է, վերջին դարերու աղաւաղման ծնունդ, որով գրաբարի մի ձեն՝ եղեր է մը, և հետեւաբար գրաբարի մէջ ըսուած աշխարհ մի, գետ մի, պակտիկի մի սոռնար մի, վարագոյր մի, և այլն, և այլն, եղեր է աշխարհաբարի մէջ աշխարհ մը, գետ մը, պակտիկ մը, սոռ մը, վարագոյր մը, ուստի և ընտրելագոյն է գրաբարի նախնական մի ձեին դառնալ:

Առ այս կը պատասխանենք հետեւալ դիտողութեամբ, որ նախնիք երկու անորոշ պարզ մասնիկ կամ լաւ ևս տառեր ունէին, ի և ո, առաջնով նշանակելու իրեն, և երկրորդով նշանակելու որևար. որ է ըսել առաջնով անշունչ արարածները և երկրորդիւ շնչաւորները. և այս տառից հետ կը միացնէին մն զուգադրութիւնը, կազմելով իմն, ոմն. ուստի կ'ըսէին աշխարհ իմն, գետ իմն, յոյս իմն, այր ոմն, արտոռած ոմն, կոյր ոմն, և այլն. թէ արդեօք ինչ ձայնաւորի կրճատմամբ յառաջ եկած է այս մն զուգադրութիւնն՝ չնչք

կարող զնոել. հաւանական է ըսել ի ձայնաւորին կորուսմամբ, որով մն թաղադրած կը համարիմք 'ի մի և ն ձայներէ՜, որ է մի թուական ածականն և ն՝ էութեանց որոշիչ յօդն: Ուստի եթէ նախնիք մի թուականն ի անորոշ մասնական հետ միացնելով՝ փոխանակ զըրեւու ի-մի, գրած են ի-մ (ը) (ի-մը-ն, իմն) և ո-մի գրելու տեղ՝ գրեր են ո-մ (ը) (ո-մը-ն, ոմն), հետեանք կ'ելլէ որ այժմեան մը, մըն, և այլն, յառաջ եկած են՝ նախնական մի, մին և ամփոփուած մն ձևերէն. և չեն աղաւաղմունք, այլ կանոնաւոր փոփոխումն հին գրաբարի ձևերուն, վասն զի ինչպէս հինքն կը գրէին ի-մըն, այսպէս մենք կը գրենք և կ'ըսենք իր-մը, քան-մը, մարդ-մը, կենդանի-մը, որոց մէջ իր, քան նոյնանիչ է նախնեաց ի՛ անշունչ իրաց վերաբերեալ, յօդին, զոր ընդունելով միայն աշխարհաբար լեզուն ըսած է իք-մը, իքը, հիքը, որք հիմա անսովոր են: Իսկ ո՛ շնչաւոր իրաց յատկանիչ մասնիկն՝ աւելորդ ծանրաբեռնութիւն համարելով՝ աշխարհաբար լեզուն զայն անհետացուցեր է բոլորովին². Իսկ մն զուգադրութեան ն տառն՝ որոշիչ եռքեան, իբրև թարմատար՝ ի բաց թողուեր է գոյականաց քով³, և փոխանակ տուռն մին կամ տուռն մըն (իմն) ըսուելու, ըսուեր է տուռն մի կամ տուռն մը:

Մինչև հիմայ ըսածներէս հետեանք կ'ելլէ ուրեմն՝ որ ոչ է ընդդէմ ներդաշնակութեան, ըստ տեղւոյն պատշաճի գործածել անխտրաբար մի և մը ձևերն, ըստ իւրաքանչիւր « մարմնովոյ լսելեաց »:

Բայց մեզ համար քան վերոյիշեալ մի և մը ձևերուն զանազանութեան խնդրէն՝ աւելի կարևորագոյն խնդիր է՝ սահմանել այս մի կամ մը մասնական շարադրութեան մէջ բռնելիք դիրքը, նկատմամբ իւր հետ միացած գոյականին. կամ պարզ ևս ըսել, պէտք է քաջ որոշենք թէ մի յետադան թէ նախադան պէտք է դնել գոյականին⁴:

Ընդհանրապէս ռուսահայք և վերջին ժամանակներս նոցա դրութեան նիւթապէս հետևողք ոմանք, առանց խնդրոյն կարևորութիւն

1. Գործածուած կայ նաև մին փոխանակ մի, մը ձևերուն. զոր օրինակ խորհուրդ մին, ասկաւ մին: — Զուգադրութիւնն մն կը գտնուի նաև իբր անանց բառերու, զոր օրինակ, ազդումն, սեղումն (ամբոփուած՝ սեղմն), խոստումն, և այլն:

2. Ոմն այսպէս կը մտածէ, ոմն այնպէս, ստէս կը գործածուի աշխարհաբարի մէջ, այլ զուտ գրաբար է:

3. Եթէ լաւ գիտենք՝ նաև գրաբարի մէջ մի և իմն տարբեր պաշտօն ունին նըշանակութեան կողմանէ, և ըստ ինքեան չէ օրէն անխտիր փոխադարձութեամբ ըսել մի և նոյն նշանակութեամբ գետ մի սղորաց և գետ իմն սղորաց. վասն զի մի՛ գետոյն պատկերական ինչութիւնը կը մասնաւորէ, իսկ իմն՝ գետոյն գաղափարական ինչութիւնը, կամ թէ ըսենք մի կը ցուցնէ գետոյն գոյութիւնն, իսկ իմն՝ գետոյն էութիւնն:

4. Յայտնի է որ մի ձևն կարելի չէ նախադաս գործածել գոյականաց:

նրն 'ի նկատի ունելու՝ յատուկ ջանք մի կը ցուցնեն միշտ նախա-
դաս գոյականին դնել մի ձևը :

Ըստ մեզ՝ այդօրինակ գրութիւնն ոչ միայն հակառակ է մեր լե-
զուի քերականական կազմութեան, այլ և նիւթական հետեւութիւն
կամ փոխառութիւն մ'է՝¹ եւրոպական լեզուներէ, որոց մէջ նախա-
դաս կը գործածուի unus, uno, un, ein, և այլն : Ուստի ինչպէս նո-
քա կը գրեն un père, une maison, un oiseau, une ville, և այլն, այս-
պէս և հայ գրիչներն կը թարգմանեն՝ մի հայր, մի տուն, մի քրռ-
չուն, մի քաղաք, , փոխանակ ըսելու հայր մի, տուն մի, և այլն :

Բացայայտ է թէ՛ որքան սխալ հասկացմունք տեղի կ'ունենան,
երբ այդ նախադաս անորոշ մասնիկը շփոթուի թուական մի ածա-
կանին հետ : Օրինակ իմն, եթէ գրելու լինինք « Զինուորք իրենց ար-
շաւանքի ընթացից մէջ մի քաղաքի վրայ յարձակումն ըրին, և անդ
մի տուն աւերեցին, որոց մէջ գտաւ թշնամւոյն զօրագլուխն իւր ըն-
տանեաց հետ ապաւինած » :— Այս և ասոր նման իմաստից մէջ չէ
կարելի հասկընալ թէ՛ արդեօք մի միակ քաղաքի վրայ յարձա-
կումն ըրին զինուորք իրենց արշաւանաց մէջ, եթէ ուրիշ քաղաքնե-
րէ զատ՝ նաև քաղաքի մ'ալ, որոյ մէջ կը գտնուէր թշնամւոյն զօ-
րավարն, և այլն . և կամ արդեօք մի միակ տուն աւերեցին թշնա-
միք, եթէ զատ ուրիշ տուններէ՝ նաև տուն մ'ալ, ուր կային ապաս-
տանեալ զօրավարին ընտանիքն :

Այս անտեղութիւնն ռուսահայ մամուլն ինքնին անդրադարձած է,
և որպէս զի երկրի մի իմաստներ չկազմէ, հարկ համարած է յատուկ
բացատրութիւն մի գտնել անորոշ մի մասնական փոխարէն, և հը-
նարած է մի ինչ որ՝ ծանրատաղտուկ բացատրութիւնն, մէկ մաս-
նրկան տեղ՝ երեք մասնիկ իրարու կից գրելով . այսպէս ըսած է . մի
ինչ որ քանաւատեղճ . մի ինչ որ կարևոր խնդիր, և այլն, փոխա-
նակ տաճկահայոց նման գրելու քանաւատեղճ մը, կարևոր խնդիր
մը, և այլն :

Բայց մեզ առաւելագոյն իրաւունք կ'ազդէ բողոքելու, երբ կը
տեսնենք որ վերջին ժամանակներս՝ տաճկահայոց քանի մը յօդուա-
ծագիրք, յատուկ իմն դիտաւորութեամբ, վերոյիշեալ ռուսահայ ան-
տեղութեան հետեւելով, մի մասնիկը չեն խորիւր նախադաս կարգելու

1. Ներելի համարուի մեզ, իբրև սիրողք հայերենի յատուկութեան, բողոք բառ-
նալ ընդդէմ այժմեան քանի մի ունիքոյական բառակազմներու, որք հայերէն կամ
հայացեալ արմատոց վրայ չեն խղճէր օտար լեզուի ածանցներ ագուցանել և գրել,
զոր օրինակ, ժնկալոք (աճկ. չեօքմէք), յոբելիս (jubiliarius, jubilatoire), քերթոն
(seuilleton) և այլն, չիւք այնպէս ինչպէս կը գրէին հին Ունիթորներն՝ վեհադասար
(illustrissimus) լեդեքի (ledere), և այլն :

1. Ճշգրտոյն ըսելով ոչ եթէ հնարած այլ ունիթորական ոճով նիւթապէս հայ
լեզուի դարձուցեր են եւրոպական լեզուաց quelque (ինչ որ) բացատրութիւնն :

գոյականին, առարկելով՝ իբր թէ այնու առաւելագոյն ներդաշնակու-
թիւն տուած իննն լեզուին:

Մեզ կ'երևի որ այդպիսեաց ականջին հայկական բարրառէ աւելի
մերձաւորագոյն իրենցութիւն ունեցեր են եւրոպական լեզուներն. և
կամ այդպիսիք՝ իրենց մայրենի լեզուն հուսկ յետոյ քան զայլ
ուսած լինելով, իրենց լսելեաց մէջ կանխահաս ընտելացած դար-
ձուածները աւելի ներդաշնակ կը թուին՝ քան թէ հայկական լեզուի
յատկութեանց բնագործնէ: Հետեաբար իրենք զիրենք նրբագոյն կ'ու-
զեն ճանաչել լսելեօք քան զփափկախօս յատակարան նախնիս մեր,
որք եթէ յունական շատ մի նրբութիւններ մոռցեր են մեր լեզուին
մէջ, այլ ոչ երբեք այնպիսի փոխառութիւններ՝ որք հայկական լե-
զուի կազմութեան հակառակին, ինչպէս է մի մասնական նախադաս
գոյականի գործածութիւնն, որ բնաւ չի գտնուիր ընտիր նախնեաց
քով, այլ միայն միջին դարուց ռամկօրէն աշխարհաբարի մէջ, այն ալ
ցանցառ կերպով, և մին ձեռով, այսպէս մին քարի խորհուրդ, մին
սքող ոսկեղէն, և այլն:

Ի զուր է առարկել մեզ՝ թէ 'ի նախնեաց կալ գրուած մի նախա-
դաս գոյականի. օրինակ իմն. Ծալեալ 'ի մի կողմն. Ի ներքոյ միոյ եղևին
ժառոյ. Յետ սակաւ մի ժամու. Փոքր մի մանկան. Գտեալ մի պա-
տուական մարգարիտ, և այլն. վասն զի այդ բացառութիւնք ունին ի-
րենց պատճառներն. և չեն նման բուսահայ մամլոյն գործածած մի
նախադասին: Եւ յիրաւի, եթէ վերոյիշեալ և անոնց նման օրինա-
կաց վրայ ակնարկ մի ձգենք՝ պիտի տեսնենք որ մի անորոշն գրուած
է ընդ մէջ նախորին, հոլովառու բառին և կամ ածականին ու նոցա
վերաբերեալ գոյականին, և ոչ նախ քան զնախորին, զածականն
կամ հոլովառու բառն. կազմութիւն մի՝ որ յատուկ է միայն զբա-
բարի և անհնարին է աշխարհաբարի յատկացնել. ապա թէ ոչ հարկ
էր գրել պզտիկ մի մասնական հայրը, և այլն, մինչդեռ ընդհակառա-
կըն բուսահայն կը գրէ մի փոքր երեխայի մօտ կանգնած էր մի
սեւաւղէմ պառաս, ածականաց ալ նախադաս դնելով մի մասնիկը:—
Իսկ վերոյիշեալ օրինականներէն վերջնոյն և նորա նմանեաց մէջ չէ կա-
րելի չտեսնել որ մի՝ թուական ածական է, միակ նշանակութեամբ,
և ոչ թէ մի անորոշ մասնիկ՝ իմն, իբ նշանակութեամբ:

Եթէ փափաքել իրագործութիւն է բուսահայ և տաճկահայ գա-
ւառաբարբառներու իրարու մերձեցումն, յայտնի է որ մի անորոշ
մասնական գոյականի յետադաս կիրառութիւնն՝ անհրաժեշտ պայ-
ման մը պիտի լինի տաճկահայոց կողմանէ, որոյ գործադրութիւնն
հարկ է պահանջել 'ի բուսահայոց:


Իսկ մենք բաւական համարելով մինչև հիմա ըսածնիս, կ'ամփո-
փենք զայն և կնքենք հետեւեալ համառօտ նախադասութեամբ. Մի
կամ մը անորոշ մասնական գործածութիւնն ըստ պատշաճի տեղոյն

կամ ըստ օրինաց ներդաշնակութեան՝ ազատութիւն է մի և կամ մը
ձևերով անխտիր գործածել, բայց միշտ ղենելով զայն յետադաս գո-
յականի:

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՐԹԱԳԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎՈՑ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ



ԸՍՏ կտակի քարեյիշատակ Յովսեփայ Խզմլըեանց, Գործադիր մնայում Յամծմա-
ծողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն, որք ազգային
Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ հր և է աշխատութեամբ մը կը փափաքին
մասնակցիլ Սահակ—Մեսրոպեան զրական մրցամակարաշխութեան, հաճիմ իրենց
աշխատութիւններն յուղարկել միմէն յառաջիկայ 1891 տարւոյ Յունուարի վերջը առ
Ամեմապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, Յամծմաժողովոյս հասցէին:

Ցապազրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրիմակ յուղարկուին. իսկ ձեռագիրք
ըմաւ յետ չեն դարձուիր:

12 ՅՈՒՆԻՍ 1890

Կ. ՊՈԼԻՍ

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ

